ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր Կորյուն Աթոյանի ելույթ-հաշվետվությունը գիտխորհրդի ընդլայնված նիստում

Հարգելի՛ գործընկերներ,
սիրելի՛ ուսանողներ,

Հաշվետվությունն ընդգրկում է համալսարանի գործունեության տարբեր բնագավառներում ձեռնարկված փոփոխությունների մանրամասն նկարագրությունը և վիճակը հաշվետու տարվա վերջի դրությամբ: Բացի դրանից, ներկայացվում են ենթակառուցվածքային, ռեսուրսային, որակական ցուցանիշները՝ կապված ուսումնական գործընթացի արդյունքների, ինչպես նաև մի շարք նախագծերի հետ:

1. Կրթական գործունեության կազմակերպում

Կրթական գործընթացը համալսարանում նպատակաուղղված է աշխատաշուկայում մրցունակ, իչպես իր մասնագիտությամբ, այնպես էլ հարակից բնագավառներում արդյունավետ աշխատելու ունակ, երկրի սոցիալ-տնտեսական պահանջմունքներին, մշակութային և ազգային առանձնահատկություններին համապատասխանող, բարձր որակավորմամբ մասնագետների ձևավորմանը:

Հաշվետու տարում ՀՊՏՀ-ում շարունակվել են կրթության որակի բարելավման, գիտահետազոտական աշխատանքների ակտիվացման, արտաքին կապերի ընդլայնման ու խորացման աշխատանքները:

Չնայած որոշակի ձեռքբերումներին, իրականացվող վերափոխումները, ընդհանուր առմամբ, դեռևս չեն անդրադարձել կրթական ծրագրերի բովանդակությանն ու որակին, ինչը լուրջ խոչընդոտ է եվրոպական բարձրագույն կրթության տարածքում ինտեգրվելու տեսանկյունից:

Վստահ եմ, որ առկա հիմնախնդիրների լուծման և զարգացման նոր ուղեգիծ դուրս գալու համար համալսարանն ունի անհրաժեշտ ներուժը: Այն հնարավոր կլինի առավելագույնս օգտագործել մեր կազմակերպվածության և պատասխանատվության բարձրացման, մեզ վստահված կարևոր գործին անմնացորդ նվիրվելու միջոցով:

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանն այսօր դարձել է հանրապետության առաջատար գիտակրթական հաստատություններից մեկը, որտեղ ձեռնարկվում են նորաստեղծական զարգացման ուղի դուրս գալու վճռական քայլերը:

1.1 Ընդհանուր տեղեկություններ պրոֆեսորադասախոսական կազմի, ուսանողների և շրջանավարտների թվի վերաբերյալ

17.12.2013թ. դրությամբ համալսարանն ունի 671 հիմնական հաստիքային աշխատակից, որոնցից 259-ը օգտվում է բժշկական ապահովագրությունից: Ապահովագրավճարների գերակշիռ մասը փոխհատուցում է համալսարանը:

Այժմ համալսարանում սովորում է 7932 ուսանող:

2007-2013թթ. առկա ուսուցման բակալավրիատի ուսանողների թիվը նվազման միտում է դրսևորել՝ կրճատվելով ավելի քան 1700-ով:

2013 թվականին առկա ուսուցման բակալավրիատին հատկացվել է 926 տեղ, որից 60-ը՝ ուսման վարձի լրիվ (100%) փոխհատուցմամբ, 866-ը՝ վճարովի համակարգում: Փաստացի առկա ուսուցման բակալավրիատ է ընդունվել 989 դիմորդ:

Առկա ուսուցման մագիստրատուրա է ընդունվել 524 դիմորդ, որից 185-ը ուսման վարձի լրիվ (100%) փոխհատուցմամբ, իսկ 339-ը՝ վճարովի համակարգում: Գործատուների հետ համատեղ իրականացվող մագիստրոսի կրթական ծրագրով ընդունելությունը կազմակերպվել է համալսարանին հատկացված ընդհանուր տեղերի հաշվին:

Հեռակա ուսուցման բակալավրիատ է դիմել 417 դիմորդ, մրցույթով ընդունվել են 363-ը: Հեռակա ուսուցման մագիստրատուրա է դիմել 518 դիմորդ. մրցույթով ընդունվել են 387-ը՝ 8 մասնագիտությամբ և 16 մասնագիտացմամբ:

2013թ. ուսուցման բոլոր ձևերում ընդունվել է 2263 ուսանող, որոնցից ավելի քան 200-ը տարբեր պատճառներով գործերը ետ են վերցրել:

1.2 Ուսման առաջադիմություն, փոխատեղում, հեռացված, ազատված և վերականգնված ուսանողների թիվը

Ուսման առաջադիմությունը չափվում է բոլոր գնահատականների մեջ դրական գնահատականների տեսակարար կշռով և բարձր գնահատականներով սովորողների հարաբերական թվով:

Համալսարանից ուսման անբավարար առաջադիմության, զինվորական ծառայության մեկնելու և այլ պատճառներով 2012-2013 ուսումնական տարում ազատվել (հեռացվել) են. առկա ուսուցման բակալավրիատից՝ 393, հեռակա ուսուցման բակալավրիատից՝ 234, առկա ուսուցման մագիստրատուրայից՝ 62 և հեռակա ուսուցման մագիստրատուրայից՝ 57 ուսանողներ, իսկ վերականգնվել են, համապատասխանաբար՝ 60, 58, 5 և 2 ուսանողներ:

2012-2013 ուսումնական տարվա ուսման վարձի զեղչից, ըստ գործող կանոնակարգի, առաջին և երկրորդ կիսամյակներում համապատասխանաբար օգտվել են՝ առկա ուսուցման բակալավրիատի 394 և 320, հեռակա ուսուցման բակալավրիատի 145 և 117, առկա ուսուցման մագիստրատուրայի 74 և 95, հեռակա ուսուցման մագիստրատուրայի 101 և 90 ուսանողներ:

1.3. Կրթության որակ

Որակի ապահովման համակարգի ստեղծումը պայմանավորված է ինչպես ՀՀ կառավարության որոշումներով, այնպես էլ համալսարանի գործունեության արդյունավետության բարձրացման խնդրով:

Որակի համակարգի ստեղծումը համալսարանում կարևորվում է հատկապես ազատ, անկաշկանդ ակադեմիական բանավեճերի հարթակ ստեղծելու նպատակով, որպեսզի գիտական միտքը և նորարարությունը, գործակցային հարաբերությունները բուհում արժեքային համակարգի ու որակի մշակույթ սկզբնավորեն: Իր հերթին, որակի մշակույթի ստեղծումը հիմնարար նշանակություն կունենա մեր համալսարանի բարեփոխումների գործընթացում: Կցանկանայինք շեշտել, որ որակի ներքին ապահովման բուհական համակարգի ձևավորումը

համապարփակ բարեփոխումների ոչ միայն անբաժան մասն է, այլև հիմնական շարժիչ ուժը:

Բարեփոխումները կկրեն ձևական բնույթ, եթե համալսարանը չիրականացնի ինքնավերլուծություն և չնախանշի ապագային միտված ռազմավարություն: Առանց ինստիտուցիոնալ կարողությունների և ուսումնական գործունեության ինքնավերլուծության ու գնահատման՝ անհնարին կլինի մեր համալսարանի գործունեության արդյունավետության բարձրացումը:

Համալսարանում ստեղծված որակի ապահովման աշխատանքային խմբերը 2012-2013թթ. ընթացքում իրականացրել են համալսարանի ենթակառուցվածքային կարողությունների փորձնական ինքնավերլուծություն՝ համաձայն Որակի ապահովման ազգային կենտրոնի մշակած և ՀՀ կառավարության որոշման հավելված կազմող ձևաչափի: Հավաքագրված տեղեկատվության ամփոփման արդյունքում կազմված «ՀՊՏՀ փորձնական ինքնավերլություն» զեկույցը 2013 թվականի սեպտեմբերին ներկայացվել է ՀՀ ԿԳՆ «Կրթական ծրագրերի կենտրոն»՝ ծրագրերի իրականացման գրասենյակ:

2013 թվականի հունիսին համալսարանը ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացի համար դիմում-հայտ է ներկայացրել «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամին և նախատեսված ժամկետում ներկայացրել ՀՊՏՀ ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը:

Որակի ապահովման ասպարեզում 2013թ. համալսարանի գործունեության հիմնական ուղղություններն էին.

1. ՀՊՏՀ ենթակառուցվածքային ինքնավերլուծության գործընթացների կազմակերումը,
2. որակի ապահովման հայեցակարգային փաստաթղթերի մշակումը,
3. բուհում որակի մշակույթի ձևավորմանը միտված վերապատրաստումների կազմակերպումը,
4. միջազգայնացումը:

2013 թվականի ընթացքում մշակվել են կրթության որակի ապահովման գործընթացների կանոնակարգմանն ուղղված մի շարք հայեցակարգային փաստաթղթեր, այդ թվում՝

1) ՀՊՏՀ որակի ապահովման քաղաքականությունը և ընթացակարգերը,
2) ՀՊՏՀ գործունեության հետադարձ կապի մեխանիզմները:
3) Հրատարակման փուլում է գտնվում «Որակի ձեռնարկը»:

Հաշվետու տարում «Որակի ապահովման ներբուհական համակարգի ներդրման և դրա հետագա բարելավման» ծրագրի շրջանակներում համալսարանում կազմակերպվել են հետևյալ աշխատաժողովները.

1) 24 հունիսի, 2013 թ., թեման՝ «Որակի ապահովման հետադարձ կապի մշակման մեխանիզմները»:
2) 18 սեպտեմբերի, 2013թ., թեման՝ «Ինքնավերլուծության արդյունքների հիման վրա որակի ապահովման քաղաքականության վերանայումը»:

Համալսարանի 20 աշխատակիցներ 2013 թվականին մասնակցել են Համաշխարհային բանկի «Կրթության որակ և համապատասխանություն» երկրորդ վարկային ծրագրի շրջանակներում Որակի ապահովման ազգային կենտրոնի փորձագետների կողմից իրականացվող «Որակի արտաքին և ներքին ապահովման համակար-

գերի մշակում և բարելավում» խորագրով վերապատրաստման դասընթացների բոլոր երեք փուլերին: Վերոնշյալ վերապատրաստումները միտված են բուհերում որակի մշակույթի ձևավորմանը, ինչպես նաև բուհերում որակի ապահովման գործընթացների վերաբերյալ առավել լայն շրջանակներում իրազեկվածության ընդլայնմանը:

Միջազգայնացումը որակի ապահովման կարևորագույն բաղադրիչներից է, որն ուղղված է Հայաստանի կրթության որակի ճանաչմանը, համադրելիության և մրցունակության ապահովմանը: Այս ասպարեզում ևս ակտիվ գործունեություն է ծավալվել՝ ապահովելով մասնագիտական կրթության որակի ապահովման ոլորտում միջազգային կառույցներին ՀՊՏՀ անդամակցումը և արտերկրի համալսարանների հետ համագործակցության զարգացումը:

Որակի ապահովման բաժնի և «ՅՈՒՆԵՍԿՕ»-ի Կրթության կառավարման ամբիոնի համատեղ նախաձեռնությամբ և անմիջական մասնակցությամբ համալսարանը 2013թ. Եվրոպական հանձնաժողով է ներկայացրել Տեմպուսի մի շարք ծրագրեր, որոնցից 4-ը հաղթել են մրցույթում: Այսպիսով, նախորդ տարվա 3 ծրագրեի հետ այժմ համալսարանը մասնակցում է Տեմպուսի 7 ծրագրերի: Դրանցից «ARARAT» ծրագրի համակարգողը հենց մեր համալսարանն է:

Վերջին չորս ծրագրերի իրականացումը կսկսվի 2013 թվականի վերջից: Բոլոր ծրագրերը կիրականացվեն համալսարանական կոնսորցիումների միջոցով՝ ընդգրկելով ինչպես Եվրոպական Միության, այնպես էլ Հայաստանի, Արևելյան Եվրոպայի և Միջին Ասիայի համալսարաններ և կրթական կազմակերպություններ:

Այսպիսով, որակի ապահովման համակարգի ստեղծմամբ և զարգացմամբ համալսարանը ձևավորում է բարեփոխումների մի միջավայր, որը նպաստելու է բուհի կարողությունների վերլուծությանը, արժևորմանը և արդյունավետության բարձրացմանը, ինչպես նաև վարչական, ֆինանսական և ուսումնական գործունեության բարելավմանը:

Որակի ապահովման գործընթացները համալսարանում շարունակական բնույթ են կրելու և իրականացվելու են «պլանավորում – իրականացում – գնահատում –բարելավում» շրջափուլերով:

1.4. Ուսանողների փորձառությունների կազմակերպում

2012-2013 ուսումնական տարում կազմակերպել է 5 փորձառություն՝

1) գիտահետազոտական՝ առկա ուսուցման մագիստրատուրայի 2-րդ կուրսերի համար (390 ուսանող), 10 շաբաթ տևողությամբ՝ փետրվարի 9-ից ապրիլի 19,

2) արտադրական՝ 4-րդ կուրսերի համար (977 ուսանող), 4 շաբաթ տևողությամբ՝ մարտի 25-ից ապրիլի 19,

3) գիտահետազոտական՝ հեռակա ուսուցման մագիստրատուրայի 2-րդ կուրսերի համար (302 ուսանող), 10 շաբաթ տևողությամբ՝ ապրիլի 2-ից հունիսի 7-ը,

4) գիտամանկավարժական՝ առկա ուսուցման մագիստրատուրայի 2-րդ կուրսերի համար (510 ուսանող), 6 շաբաթ տևողությամբ, նոյեմբերի 3-ից դեկտեմբերի 14-ը:

5) գիտամանկավարժական՝ հեռակա ուսուցման մագիստրատուրայի 2-րդ կուրսերի համար (415 ուսանող), 6 շաբաթ տևողությամբ՝ նոյեմբերի 3-ից դեկտեմբերի 14-ը:

Համալսարանը ուսանողներին աշխատաշուկայում ներգրավելու նպատակով համագործակցել է մի շարք ընկերությունների հետ և ուսանողներին մասնակից դարձրել տարատեսակ ծրագրերին և ստաժավորմանը, ինչի արդյունքում 80 ուսանող ընդունվել է աշխատանքի:

Համալսարանը աջակցել է նաև ուսանողների աշխատանքի տեղավորմանը՝ տարբեր կազմակերպություններից ազատ աշխատատեղերի մասին տեղեկատվություն ստանալով և այն հրապարակելով համալսարանի պաշտոնական կայքում ստեղծված «Կարիերայի կենտրոն» ենթաբաժնում: Ազատ աշխատատեղերի և տարատեսակ աշխատաշուկաների, սեմինարների ու ծրագրերի մասին տեղեկատվությունն արդեն տարածվում է նաև սոցիալական ցանցերի միջոցով:

Հաշվետու տարում ուսանողների փորձառությունների կազմակերպման և կարիերային աճի համար համալսարանում կազմակերպվել են նաև բազմաբնույթ այլ տեղեկատվական միջոցառումներ:

1.5. Ուսումնամեթոդական աշխատանքներ

2013 թվականին համալսարանի ուսումնամեթոդական աշխատանքների բնագավառում իրականացվել է կրթության համակարգի արդիականացմանն ուղղված միջոցառումների համալիր:

Դրանք իրականացվել են հետևյալ ուղղություններով.

1. Վերամշակվել և արդիականացվել են բակալավրիատի ու մագիստրատուրայի մի քանի մասնագիտությունների ու մասնագիտացումների ուսումնական պլաններն ու առարկայական ծրագրերը: Ամբիոնները շարունակել են բակալավրիատի ուսումնական մոդուլների թեստային բազաների բարելավումը և հարստացումը:

2. Գիտական խորհրդի 2013 թվականի հունիսի 12-ի N 9 նիստի որոշմամբ հաստատվել է «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում ուսանողական նպաստի, պետական և անվանական կրթաթոշակների հատկացման կանոնակարգը»:

3. Գիտական խորհրդի 2013 թվականի հուլիսի 10-ի N10 նիստի որոշմամբ առկա ուսուցման բակալավրիատում գիտելիքների գնահատման բազմագործոնային կարգում կատարվել են գիտելիքների գնահատման օբյեկտիվության բարձրացմանը միտված մի շարք փոփոխություններ:

4. 2013 թվականի օգոստոսի վերջին համալսարանը հրատարակել և ուսանողության շրջանում տարածել է «Ուսանողի ուղեցույցի» նորացված տարբերակը, որտեղ առկա է ուսումնառության ընթացքում ուսանողներին անհրաժեշտ տեղեկատվությունը:

5. Սկզբունքորեն նոր մեթոդաբանությամբ կազմվել է «Կրթության կառավարում» մագիստրոսական մասնագիտացման կրթական ծրագիրը, ինչը բարձր գնահատականի է արժանացել համանման կրթական ծրագիր իրականացնող եվրոպական առաջատար համալսարանների փորձագետների կողմից: Առաջիկայում, ՀՀ կառավարության կողմից մասնագիտությունների խոշորացված ցանկի հաստատումից հետո, համալսարանում թե՛ բակալավրիատի, թե՛ մագիստրատուրայի բոլոր

մասնագիտությունների կրթական ծրագրերը կկազմվեն այդ տրամաբանությամբ՝ ուսանողակենտրոն սկզբունքով՝ հաշվի առնելով նաև գործատուների պահանջները:

Խնդիրները

Արձանագրելով հաշվետու ժամանակաշրջանում կրթական բարեփոխումների և ուսման առաջադիմության ձեռքբերումները՝ կարծում ենք, որ առկա են նաև կուտակված հիմնախնդիրներ, որոնց լուծումը հրամայական պահանջ է: Այսպես.

1. Թեև վերջին տարիներին որոշակի աշխատանքներ են կատարվել ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի կատարելագործման ուղղությամբ, սակայնայդ ասպարեզում նկատվել են լուրջ բացթողումներ, որոնք դեռևս չեն ստացել ցանկալի լուծումներ: Թե՛ բակալավրիատի, թե՛ մագիստրատուրայի կրթական ծրագրերում մասնավորապես առկա են միմյանց կրկնող կամ ժամանակի պահանջներին չհամապատասխանող դասընթացներ, որոնք, մեղմ ասած, չեն նպաստում կրթության որակի բարձրացմանը:

2. Բավարար չափով և արդյունավետությամբ չեն կիրառվում կրթական նորագույն տեխնոլոգիաները, ինտերակտիվ ուսուցման եղանակները: Դասընթացների մի զգալի մասը ուսանողներին գիտամեթոդական և գործնական հմտություններ չի հաղորդում, չի նպաստում նրանց մասնագիտական ունակությունների աճին:

3. Թեև սեմինար և գործնական պարապմունքների անցկացման արդյունավետության բարձրացման հարցերը մշտապես քննարկվել են գիտական խորհրդում և ռեկտորատում, սակայն դեռևս տեսանելի տեղաշարժ չի արձանագրվել. հազվադեպ են իրավիճակային վերլուծությունները, խմբային գործարար խաղերը, գործնական հաշվարկները: Ցածր է նաև բոլոր տեսակի փորձառությունների կազմակերպման արդյունավետությունը:

4. Որոշ ամբիոններ և դասախոսներ թերանում են իրենց աշխատանքային պարտականությունները կատարել. ժամանակին չեն նորացնում առարկայական ծրագրերը, թեստային բազաները, ինչի հետևանքով անհարկի լարվածություն է ստեղծվում համակարգչային և թեստային քննությունները կազմակերպելիս:

5. Կազմակերպական թերացումների և անբավարար հսկողության պատճառով դեռևս չեն վերացել ուսումնական և աշխատանքային կարգապահության խախտումները, զգալի է նաև անհարգելի բացակայող ուսանողների թիվը:

2. ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ԱՍՏԻՃԱՆ

2.1. Գիտահետազոտական գործունեություն

Հարգելի գործընկերներ,

2013թ. նշանավորվեց նրանով, որ համալսարանի ողջ պատմության ընթացքում առաջին անգամ սեփական միջոցներից նա 100 մլն դրամ ներդրեց գիտական հետազոտությունների համար: ՀՀ Կառավարության 2012-2017թթ. ծրագրով սահմանված գերակայությունների շրջանակներում առաջին անգամ հանրապետությունում 2012թ. հայտարարվեց ներհամալսարանական գիտական դրամաշնորհների մրցույթ, իսկ 2013թ. մեկնարկեցին հետազոտությունները:

Համալսարանի խորհրդի 2013թ. հունվարի 17-ի նիստի որոշմամբ ստեղծվեց “Ամբերդ” հետազոտական կենտրոնը:

Կենտրոնում իրականացվող հետազոտություններում 2013թ. ընդգրկված են եղել շուրջ 90, իսկ ներհամալսարանական դրամաշնորհային թեմաներում 70 դասախոսներ, ասպիրանտներ, մագիստրոսներ, պետական կառավարման մարմինների աշխատակիցներ, մասնավոր հատվածի փորձառու մասնագետներ:

Ընդհանուր առմամբ ներհամալսարանական դրամաշնորհային թեմաներում և "Ամբերդ" հետազոտական կենտրոնի գիտահետազոտական ուղղություններում ներգրավված են եղել համալսարանի պրոֆեսորադասախոսական համակազմի շուրջ 20%-ը:

Հաշվետու ժամանակաշրջանում համալսարանում շարունակվել են ամբիոնային 57 թեմաներով գիտահետազոտական աշխատանքները, կատարվել են ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի 3 դրամաշնորհային թեմաներ, 13 ներհամալսարանական գիտական դրամաշնորհային թեմաներ, մեկնարկել են հետազոտություններ "Ամբերդ" հետազոտական կենտրոնի 3 ծրագրերի՝ «Սոցիալ-տնտեսական զարգացման», «Ազգային մրցունակության և միջազգայնացման», «Ազգային անվտանգության» 15 հետազոտական ուղղություններով:

2013թ. «Ասպիրանտների հետազոտությունների աջակցության ծրագիր-2012» մրցույթի արդյունքներով, ՀՊՏՀ ասպիրանտ Գայանե Ավետիսյանը արժանացել է ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի դրամաշնորհին և կատարել «Տնտեսական մրցակցության պաշտպանության հիմնախնդիրները ՀՀ-ում» թեման:

Բացի վերոնշյալից՝ համալսարանի առանձին աշխատակիցներ ներգրավված են եղել ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյան անվ. տնտեսագիտության ինստիտուտում իրականացվող հետազոտություններում, ինչպես նաև միջազգային մի քանի ծրագրերում:

Կատարվող հետազոտությունների արդյունքները ներկայացվել են 2013 թ. անցկացված երկու գիտաժողովներում.

- ներհամալսարանական «Զարգացում» գիտաժողովում (Աղվերան)
- «Տնտեսական զարգացման քաղաքականության արդի հիմնախնդիրները ՀՀ-ում» համալսարանի 23-րդ տարեկան գիտաժողովում:

Համալսարանի գիտական գործունեությանը նոր շունչ հաղորդեցին գիտական բազմաթիվ սեմինարները, որոնք առնչվել են՝ ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվող թեմաների, ներհամալսարանական գիտական դրամաշնորհների, «Ամբերդ» հետազոտական կենտրոնի շրջանակներում կատարված հետազոտություններին:

2013թ. անցկացվել են ավելի քան 30 գիտական սեմինարներ, կազմակերպվել են քննարկումներ՝ նվիրված երկրի ֆինանսական կայունությանը, սոցիալ-տնտեսական հիմնախնդիրներին առնչվող այլ արդիական հարցերին:

Սեմինարների, կլոր սեղանների, այլ քննարկումների հաճախակի կազմակերպումը, որոնց, բացի դասախոսներից, մասնակցել են ուսանողներ և ասպիրանտներ, ոչ միայն նշանակալի աշխուժացրել են համալսարանի գիտական կյանքը, այլև որոշակի նպաստ բերել մասնակիցների հետազոտական հմտությունների մեծացմանը և հետազոտությունների արդյունքների ներկայացման ու գիտական բանավեճի մշակույթի ձևավորմանն ու փորձի կուտակմանը, ինչը կարևոր նախադրյալ է հետագա հետազոտությունների արդյունավետության բարձրացման համար:

Համալսարանի աշխատակիցները 2013թ. իրականացված հետազոտությունների արդյունքներով հրատարակել են 1 դասագիրք, 14 ուսումնական ձեռնարկ, 4 մենագրություն, 7 գիրք, 9 դասախոսության տեքստ, 550 գիտական հոդված, 39 ուսումնամեթոդական աշխատանք, 1 բառարան: Հոդվածներից 62-ը հրապարակվել են արտասահմանյան պարբերականներում:

Նախահրատարակչական փուլում են շուրջ 60 մամուլ ծավալով երկու գիտաժողովի նյութերը:

Գիտական ամսագրերում ՀՊՏՀ աշխատակիցների 2013 թ. հրապարակած հոդվածների թիվը 2011 թ. համեմատ ավելացել 1.5 անգամ: Նույն ժամանակահատվածում 1.7 անգամ ավելացել են աշխատակիցների արտասահմանյան հրապարակումները:

2013 թվականին համալսարանի աշխատակիցները մասնակցել են Գերմանիայում, Մալազիայում, Թաիլանդում Հունգարիայում, Չինաստանում, Շանհայ), ՌԴ-ում, Ուկրաինայում, Վրաստանում (Թբիլիսի) անցկացված գիտաժողովներին:

Համալսարանի առանձին աշխատակիցներ տևական գիտական հետազոտությունների և սեմինարների են մասնակցել Գերմանիայում, Չինաստանում, ԱՄՆ-ում:

Ուախալի է, որ միջազգային գիտաժողովներին են մասնակցել նաև համալսարանի ուսանողներ և ասպիրանտներ:

Ուսանողների գիտահետազոտական աշխատանքը մնում է ուսումնադաստիարակչական գործընթացի հիմնական բաղկացուցիչ մասերից մեկը:

Հաշվետու ժամանակահատվածում 450 ուսանողներ, ակտիվության տարբեր աստիճանով ներգրավվել են գիտական աշխատանքում՝ համալսարանական, հանրապետական և միջազգային գիտաժողովներին, սեմինարներին, մրցույթներին մասնակցելու միջոցով: Գիտաժողովներում և սեմինարներում ներկայացվել են 170-ից ավելի զեկուցումներ: Ուսանողների զեկուցումներն աչքի են ընկել գիտական հրատապությամբ, ստեղծագործական որոնողական բնույթով, հետազոտական բարձր մակարդակով:

Գիտահետազոտական գործունեության հակված, օժտված ուսանողների բացայտումն ավելի դյուրին է ուսանողական գիտաժողովներում, գիտական սեմինարներում:

2013թ. Ծաղկաձորում անցակցվել է երկու ուսանողական գիտաժողով.

- 2013թ. ապրիլի 26-28-ին ՀՊՏՀ ուսանողական խորհրդի և Հայաստանի երիտասարդական հիմնադրամի նախաձեռնությամբ կազմակերպված «ՀՀ տնտեսության զարգացման մարտահրավերներն ու խոչընդոտները» խորագրով ուսանողական գիտաժողովը,
- 2013թ. մայիսի 31-ից հունիսի 2-ի ՈՒԳԸ «ՀՀ տնտեսության զարգացման հիմնախնդիրները» խորագրով գիտաժողովը:

«ՀՀ տնտեսության զարգացման մարտահրավերներն ու խոչընդոտները» գիտաժողովին մասնակցել և ելույթներ են ունեցել ՀՀ ազգային ժողովի նախագահ Հովիկ Աբրահամյանը:

Համալսարանում շարունակվում են ուսանողներին հետազոտություններում ներգրավման նոր ձևերի որոնումները:

2013 թ. առանձնանում է այն բանով, որ առաջին անգամ, թեկուզև՝ փոքրաթիվ, ուսանողներ ներգրավվեցին ներհամալսարանական դրամաշնորհային և «Ամբերդ» հետազոտական կենտրոնի հետազոտություններում: Դա առաջին քայլն էր, որը շարունակություն կունենա՝ կրթական բոլոր մակարդակների ավելի մեծաթիվ ուսանողների ներգրավմամբ:

Ամբիոններում սկիզբ առնող մի քանի նախաձեռնությունները, ուսանողներին հետազոտություններում ներգրավման, փոքրաթիվ, սակայն հաջողված ու հեռանկար ունեցող օրինակները հիմք են այդ գործընթացն ակտիվացնելու նոր ձևաչափերի մշակման ու կիրառման համար:

Հարգելի գործընկերներ,

Համալսարանի հաջողությունները պայմանավորված են լինելու երիտասարդ գետազոտողներով համալսարանի գիտական ներուժի զարգացմամբ, ինչին կոչված է բարձրագույն կրթության երրորդ աստիճանը՝ ասպիրանտուրան և դոկտորանտուրան, ինչպես նաև գիտական կոչումների համակարգը:

2013 թ. դրությամբ համալսարանի ասպիրանտուրայում սովորում են առկա ուսուցմամբ 29 (որից 2-ը՝ արտերկրից), հեռակա ուսուցմամբ՝ 76 ասպիրանտ:

Համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի 014 մասնագիտական խորհրդում 2013թ. կազմակերպվել է 52 ատենախոսության հրապարակային պաշտպանություն (այդ թվում՝ 1 դոկտորական ատենախոսություն):

Հաշվետու տարում ՀՀ ԲՈՀ-ը հաստատել է դոցենտի գիտական կոչում շնորհելու 9 որոշում: ՀՀ ԲՈՀ-ի կողմից ատենախոսության գիտական ղեկավար նշանակելու թույլտվություն են ստացել 7 տնտեսագիտության թեկնածու, դոցենտ:

Հարգելի գործընկերներ,

2013 թ. առանձնահատուկ տարի էր գիտության բնագավառում կատարված ներդրումների առումով: Համալսարանի սեփական միջոցների հաշվին 108 մլն դրամ կամ եկամուտների 4.0 %-ը հատկացվել գիտական հետազոտություններին:

2013թ. ՀՀ պետական բյուջեից գիտության ֆինանսավորումը կազմել է 12.9 մլն. դրամ, որից 10.8 մլն. դրամը՝ «Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանում և զարգացում» հոդվածով, իսկ 1.5 մլն. դրամը՝ «Ասպիրանտների հետազոտությունների աջակցության ծրագիր-2012»-ով և 600 հազ. դրամ՝ ՀՊՏՀ 23-րդ գիտաժողովի ֆինանսավորում:

Այսպիսով՝ 2013 թ. գիտական գործունեության համար հատկացումների ընդհանուր գումարը կազմել է 120.9 մլն դրամ, որից 89.3%-ը համալսարանի սեփական միջոցների հաշվին:

Ավելին՝ գիտական գործունեության համար կատարվել են նաև այլ՝ անուղղակի ծախսեր՝ կապված սարքավորումների, ենթակառուցվածի՝ հատկապես ներքին ցանցի ստեղծման, նյութատեխնիկական հենքի զարգացման հետ: Դրանց թվին է դասվում նաև «Ամբերդ» հետազոտական կենտրոնի գրասենյակի կապիտալ նորոգումը, կահավորումը և հագեցումը գրասենյակային սարքավորումներով:

Այսպիսով՝ համալսարանի գիտության բնագավառի ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման ուղղությամբ կատարված աշխատանքը և գիտական գործունեության բնագավառի 2013 թ. մյուս ձեռքբերումները հիմք են եզրակացնելու, որ ստեղծվել են անհրաժեշտ պայմաններ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 2012-2017 թթ. գիտահետազոտական և նորաստեղծական գործունեության զարգացման Հայեցակարգով սահմանված նպատակներին հասնելու և խնդիրները լուծելու համար:

Հիմնախնդիրները

Չնայած հաշվետու տարում գիտահետազոտական գործունեության բնագավառում ձեռքբերումներին, այդուհանդերձ, դեռևս առկա են մի շարք հիմնախնդիրներ. որոնցից են.

- երկրի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի մշակման գործընթացներում համալսարանի ներուժին ոչ համարժեք մասնակցությունը,
- տնտեսության մասնավոր հատվածի հետ համագործակցության և գիտական հետազոտությունների արդյունքների առևտրայնացման բացակայությունը,
- երիտասարդ հետազոտողներով համալսարանի գիտության բնագավառի մարդկային ներուժի զարգացման, ասպիրանտուրայի և դոկտորանտուրայի արդյունավետության ոչ բարձր մակարդակը,
- ֆինանսական հիմունքներով հետազոտություններում ասպիրանտների և ուսանողների ներգրավման ցածր մակարդակը,
- տնտեսագիտության բնագավառում վերջին նվաճումների հիման վրա ստեղծված մենագրությունների, դասագրքերի և ուսումնական ձեռնարկների սակավաթիվ լինելը,
- արտասահմանյան առաջավոր պարբերականներում գիտական հրապարակումների սակավաթիվ լինելը,
- ըստ ամբիոնների՝ գիտական հրապարակումների անհամաչափ բաշխվածությունը,
- գիտաժողովներին, գիտական սեմինարներին և գիտական այլ քննարկումներին, ըստ ամբիոնների, պրոֆեսորադասախոսական համակազմի ներկայացվածությունը,
- հետազոտությունների ֆինանսավորման աղբյուրների դիվերսիֆիկացված չլինելը:

Հարգելի գործընկերներ,

Կցանկանայի հայտնել իմ համոզմունքը, որ 2013 թ. գիտական գործունեության զարգացման ուղղված նախաձեռնությունները խթան կհանդիսանան նշված հիմնախնդիրների հաղթահարման համար:

3. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Համալսարանի միջազգային գործունեությունը միտված է համաշխարհային կրթական և գիտական տարածությանն ինտեգրվելուն, կրթական և գիտական ծառայությունների շուկայում մրցունակության բարձրացմանը, դիրքերի ուժեղացմանը, կարգավիճակի ամրապնդմանը:

Կարևորելով բնագավառի դերը համալսարանի զարգացման ներկա փուլում ՀՊՏՀ գիտխորհրդ 2013 թ. հունիսի 12-ի նիստում քննարկվել է «Միջազգային գործունեության վիճակը և խնդիրները» հարցը, իսկ ընդունված որոշմամբ հստակ հանձնարարականներ են տրվել համալսարանի համապատասխան ստորաբաժանումներին:

2013թ. աշխատանքներ են իրականացվել հետևյալ հիմնական ուղղություններով.

- գործընկերային հարաբերությունների զարգացում արտասահմանյան հեղինակավոր գիտակրթական հաստատությունների, միջազգային կազմակերպությունների հետ,
- ուսանողների և դասախոսների ակադեմիական շարժունություն և օտարերկրյա քաղաքացիների ընդունելություն,
- կրթական ծրագրերի՝ միջազգային չափորոշիչների ներմուծման գործընթացների շարունակում,

Համալսարանը համագործակցում է մոտ երեք տասնյակ արտասահմանյան բուհերի և միջազգային կազմակերպությունների հետ:

Տարեցտարի ավելանում է միջազգային դրամաշնորհների ծավալը, որը վերջին 5 տարիներին կազմել է շուրջ 975 հազ. դոլար, որից *Tempus* ծրագրերով ստացված շուրջ 67%-ը կամ 650 հազ. դոլարը՝ 2012 թ., 33%-ը կամ 275 հազ դոլարը 2013 թ.:

2013 թ. համագործակցության համաձայնագրեր են կնքվել Ինդոնեզիայի, Ֆիլիպինների, Շրի Լանկայի և Ռումինիայի առաջատար համալսարանների հետ: Նախապատրաստվել, համաձայնեցվել է և 2014 թ. հունվար ամսին համագործակցության համաձայնագիր կկնքվի Ռուսաստանի Դաշնության նախագահին կից ժողովրդական տնտեսության ռուսաստանյան ակադեմիայի հետ:

Միջազգային համագործակցության բնագավառում կարևոր իրադարձություն է հանդիսացել, «Գլոբալ Էդյուքեյշընն» բրիտանական ընկերության հետ, «Հայաստանում բրիտանական բիզնես դպրոց» հիմնադրելու 2013 թ. ՀՀ կառավարության որոշումը, ինչը հնարավորություն կընձեռնի ոչ միայն դպրոցի ապագա շրջանավարտներին ստանալ բրիտանական դիպլոմ, այլև Մեծ Բրիտանիայի առաջավոր համալսարաններից, համագործակցելու նպատակով, մեծաթիվ դասախոսներ ու հետազոտողներ հյուրընկալել համալսարանում:

Համագործակցության պայմանագիր է ստորագրվել Միավորված ազգերի կազմակերպության հանրային տեղեկատվության վարչության հետ:

Բացի այլ նպատակներից՝ վերոնշյալ համաձայնագրերը և պայմանագրերը միտված են ընդլայնելու ուսանողների և դասախոսների ակադեմիական շարժունությունը, նպաստելու կրթական միջազգային չափորոշիչների արմատավորմանը, ձևավորելու համալսարանի միջազգային վարկանիշը:

2013 թ., սեփական միջոցներով, համալսարանի ֆինանսավորմամբ, միջազգային ծրագրերի շրջանակներում (Tempus)), Եվրոպական Միության, և

Հարավ-Արևելյան Ասիայի երկրներում վերապատրաստվել կամ հետազոտությունների են մեկնել համալսարանի 57 դասախոս:

Համալսարանում հյուրընկալվել և դասախոսություններ են անցկացրել Հայաստանում արժույթի միջազգային հիմնադրամի մշտական ներկայացուցիչ Գիլերմո Տոլոսան, Ռուսաստանի Դաշնության զբոսաշրջության ազգային ակադեմիայի անդամ, Ռոստովի պետական տնտեսագիտական համալսարանի ազգային և համաշխարհային տնտեսագիտության ֆակուլտետի հակաճգնաժամային և կորպորատիվ կառավարման ամբիոնի դոցենտ Ռիմա Զախարովան:

2012-2013 ուստարում համալսարան են ընդունվել 10 օտարերկրացի ուսանող Հնդկաստանից և Նեպալից, որից 7-ը՝ հաջողությամբ հանձնել են համալսարանի կողմից կազմակերպված 6-ամսյա և 1 տարվա նախապատրաստական դասընթացի ավարտական քննությունները և ստացել ավարտական հավաստագրեր: 3 ուսանող չեն կատարել նախատեսված ուսումնական պլանները և հեռացվել են համալսարանից:

2013 թ. կատարվել է օտարերկրացիների 2013-2014 ուս. տարվա ընդունելություն: Համալսարանում ուսանելու համար դիմել են Հնդկաստանի, Նեպալի և Շրի Լանկայի 90 քաղաքացիներ: Նախապատրաստական դասընթացներում, բակալավրիատում և մագիստրատուրայում ընդունվել է 34 օտարերկրացի:

Մի քանի տասնյակ հայրենակիցներ ԱՄՆ-ից, Բելոռուսից, Հունաստանից, Ռուսաստանի Դաշնությունից, Սիրիայից, Վրաստանից, Էստոնիայից, Լիտվայից ընդունվել են համալսարան և հաջողությամբ ինտեգրվել իրենց համար նոր միջավայրում:

Ներկայում համալսարանում ուսանում են շուրջ 200 օտարերկրյա քաղաքացիներ:

Հարգելի գործընկերներ,

Վերոնշյալը մեզ պարտավորեցնում է կրթական ծրագրերը և դասավանդման տեխնոլոգիաները համապատասխանեցնել միջազգային չափորոշիչներին:

2013 թ. շարունակվել է, ուսումնական ծանրաբեռնվածությունը ակադեմիական կրեդիտների եվրոպական համակարգում (ECTS) հաշվառման աշխատանքների բարելավումը, դիպլոմի եվրոպական ներդիրների տրամադրումը, լսարանների տեխնիկական-տեխնոլոգիական հագեցումը՝ դասավանդման նոր մեթոդների կիրառման ապահովման նպատակով:

Այդուհանդերձ, մեծաթիվ են համալսարանի միջազգայնացման հիմնախնդիրները:

Հիմնախնդիրները

- Ակադեմիական փոխանակումները չեն բավարարում համալսարանի միջազգայնացման պահանջները.
- արտերկրից չեն հրավիրվել կրթական ծրագրեր և հետազոտություններ իրականացնող գիտնականներ, դասախոսներ,

- մեծ չէ արտասահմանյան բուհեր գործուղված և փոխանակությամբ ընդունված ուսանողների, դասավանդման և հետազոտությունների համար այլ երկրներ մեկնող մեր գիտնական մանկավարժների թիվը (0.75%):,
- համալսարանը ներկայացված չէ միջազգային ակադեմիական աստիճանակարգերում,
- գործընկերության համաձայնագրերը լիովին չեն իրագործվում,
- չեն իրականացվում համատեղ մագիստրոսական, դոկտորական ծրագրեր,
- սակավաթիվ են արտասահմանյան համալսարանների և հետազոտական կենտրոնների հետ իրականացվող համատեղ հետազոտությունները և արտասահմանյան գործընկերների հետ համահեղինակային հրապարակումները:

4. ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐ

2013 թվականին համալսարանը շարունակել է հասարակայնության հետ կապերի ընդլայնման և ինտենսիվացման աշխատանքները: Դրան մեծապես նպաստել է նաև համալսարանի պաշտոնական կայքի ամենօրյա սպասարկումը:

2013թ. համալսարանն ընդարձակել է իր աշխատանքները կայքի սպասարկման առումով՝ բացվել են նոր խորագրեր, ներկայացվել է թե՛ դիմորդների, թե՛ ուսանողների համար անհրաժեշտ տեղեկատվություն, գիտական խորհրդի, ռեկտորատի որոշումները, ընդունելության գործընթացին վերաբերող կարևոր տեղեկություններ, տեղադրվել են տարեկան հաշվետվությունները, համախմբված ֆինանսական հաշվետվությունները, բուհական պարբերականների՝ «Տնտեսագետ» ամսագրի և «Բանբեր ՀՊՏՀ-ի» գիտական հանդեսի էլեկտրոնային տարբերակները: Այլ կերպ ասած, կայքում ներկայացվել է համալսարանի գործունեության տարբեր ուղղություններին վերաբերող տեղեկատվություն: Ընդ որում, այդ աշխատանքները կատարվել են կայքի ոչ միայն հայերեն, այլև ռուսերեն և անգլերեն տարբերակներում:

Համալսարանի պաշտոնական կայքում այս տարի գործարկվել է էլեկտրոնային գրադարանը՝ համալրված համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի հեղինակած շուրջ 70 անուն դասագրքերով, ուսումնական ձեռնարկներով, մենագրություններով, դասախոսությունների տեքստերով: Նախատեսում է առաջիկայում թվայնացնել գրադարանային ամբողջ ֆոնդը:

2013թ. համալսարանի պաշտոնական կայքում գործարկվել են նաև «Ամբերդ» հետազոտական կենտրոն», «Մեր շրջանավարտները» բաժինները:

2013թ. ամռանը համալսարանի պաշտոնական կայքը վարկանիշային աղյուսակում «Կրթություն և գիտություն» բաժնում զբաղեցրել է առաջին հորիզոնականը, այսինքն՝ համալսարանի կայքն առաջ է անցել ոչ միայն հայաստանյան բուհերի, այլև ոլորտը ներկայացնող մնացած կայքերից: Համալսարանի պաշտոնական կայքի այցելուների միջին օրական թիվը այժմ հասել է 1200-ի:

Առցանց ձևաչափում աշխատանքներ են իրականացվում նաև համալսարանի ֆեյսբուքյան պաշտոնական էջի սպասարկման ուղղությամբ: 2013թ. համալսարանի պաշտոնական էջի օգտատերերի թիվն ավելացել է մոտ 2 անգամ և այսօր կազմում է մոտ 8000: Ի տարբերություն բուհի պաշտոնական կայքի՝ սոցցանցում

համալսարանի պաշտոնական էջը ներկայացնում է նաև ժամանցային, մշակութային նյութեր, թեթև ժանրի հրապարակումներ:

Հասարակայնության տարբեր շերտերի և ուսանողության հետ կապի կարևոր միջոց է նաև համալսարանի պաշտոնական՝ «Տնտեսագետ» ամսագիրը: 2013թ. ամսագրի էջերում բացվել են նոր խորագրեր՝ «Հայրենիքը սկսվում է բնությունից», «Փորձագիտական հարթակ», «Վարքուբարք», «Ամենակարևորի մասին»: Ամսագրի միջոցով ընթերցողի հետ հետադարձ կապ ապահովելու նպատակով տարբեր ֆակուլտետներում և մեկ առանձին կուրսի շրջանում թեմատիկ հարցումներ են անցկացվում, որոնք մեկնաբանվում են համալսարանի գիտնական մանկավարժների կողմից:

Համալսարանն իր կարևորագույն միջոցառումների ժամանակ կապ է պահպանում նաև լրատվամիջոցների հետ: Նրանց է ուղարկվում մամուլի հաղորդագրություններ, տրամադրվում է հանրությանը հետաքրքրող անհրաժեշտ տեղեկատվություն: Համալսարանի մասին լրատվամիջոցների (թերթեր, էլեկտրոնային կայքեր, հեռուստաընկերություններ, ռադիոկայաններ) գրեթե բոլոր հրապարակումները տեղադրվում են համալսարանի պաշտոնական կայքի «ՋԼՄ-ները ՀՊՏՀ-ի» մասին խորագրի ներքո: Նման հրապարակումների թիվը 2013 թ. կազմել են մոտ 200, որոնցից շուրջ 125-ի հղումները ներկայացված են վերը նշված խորագրի ներքո:

Ստեղծվել է համալսարանի մասին պատմող պատկերազարդ տեղեկատվական գրքույկ, ինչպես նաև վերջին երկու տարիների ձեռքբերումներն արտացոլող լուսանկարային տարեգիրք՝ համահավաք ներկայացնելով կարևոր իրադարձությունները, բուհի առաջընթացը: Նկարահանվել է համալսարանի վերջին տարիների խոշոր ծրագրերի մասին պատմող տեսաֆիլմ: Ստեղծվել է համալսարանի և «Ամբերդ» գիտահետազոտական կենտրոնի բրենդ-գիրքը:

5. ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԵՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Համալսարանի ռեկտորատի, դեկանատների, ամբիոնների, ուսանողական խորհրդի, «Տնտեսագետ» ամսագրի գործունեության հիմքում ուսանողության ուսումնադաստիարակչական խնդիրներն են:

Անցած մեկ տարվա ընթացքում ուսանողական խորհուրդը շարունակել է համախմբել հասարակական ակտիվություն դրսևորող ուսանողներին: Կազմակերպվել են օլիմպիադաներ, ուսանողական գիտաժողովներ, մարզական և մշակութային միջոցառումներ, ինտելեկտուալ խաղեր, ավանդական դարձած մրցույթ-փառատոնները, բանավեճեր, այցելություններ Հայաստանի պատմամշակութային վայրեր և թանգարաններ: Ուսանողներն ակտիվորեն մասնակցել են նաև հայրենասիրական ծրագրերին. ՀՀ պաշտպանության նախարարության աշխատակիցների հետ պարբերաբար այցելություններ են կատարել տարբեր զորամասեր, սահմանային գոտիներ:

Ռազմահայրենասիրական ծրագրերից ցանկանում եմ առանձնացնել Արցախյան հերոսամարտում զոված մեր բուհի ուսանող-ազատամարտիկների կյանքին ու մարտական ուղուն նվիրված, ուսխորհրդի նախաձեռնությամբ հրատարակված «Մարտական հաշվարկ» գրքի դեկտեմբերի 6-ին համալսարանի հանդիսասրահում տեղի ունեցած շնորհանդեսը: Ներկա էին զոհված ուսանող-ազատամարտիկների

ընտանիքի անդամները, ընկերները, բարեկամները: Նշեմ նաև, որ Արցախյան հերոսամարտում զոհված ուսանող-ազատամարտիկները հետմահու պարգևատրվել են ՀՊՏՀ ոսկե հուշամեդալներով:

Ուսանողական խորհուրդը պարբերաբար իրագործում է նաև սոցիալական ծրագրեր՝ այցելություններ մանկատներ, ծերանոցներ և այլն: Չեն անտեսվում նաև կարիքավոր ուսանողների խնդիրները: Սույն թվականի փետրվարին Հայաստանի երիտասարդական հիմնադրամի հետ իրականացվել է մոտ 100 ուսանողի ուսման վարձի մասնակի փոխհատուցում:

Ուսանողները ակտիվ մասնակցություն է ունեցել նաև կրթական համակարգին վերաբերող աշխատանքներին, ուսանողությանը հետաքրքրող հարցերի շուրջ իրականացրել են սոցիոլոգիական հարցումներ:

Համալսարանի ուսանողները փայլուն մասնակցություն են ունեցել «Բազե-2013» երիտասարդական հավաքին և վերադարձել են հաղթանակով, որին ներկա է եղել նաև ՀՀ նախագահը:

Սույն թվականի հունվարի 19-ին Հայաստանի Երգի պետական թատրոնում տեղի ունեցած Հայկյան մրցանակաբաշխության ժամանակ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ուսանողական խորհուրդը երկրորդ տարին անընդմեջ արժանացել է «Լավագույն ուսանողական ինքնակառավարման մարմին» անվանակարգին: Պարգևը հանձնել է ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը:

Կազմակերպվել է նաև «ՀՀ տնտեսության զարգացման խոչընդոտներն ու մարտահրավերները» խորագրով ուսանողական գիտաժողովը, որի ավարտին տպագրվել է նյութերի ժողովածու: Գիտաժողովին ներկա է եղել ՀՀ Ազգային ժողովի նախագահ, ՀՊՏՀ խորհրդի նախագահ Հովիկ Աբրահամյանը:

Նոյեմբերի 11-ին, ՀՀ ԿԳ նախարար Արմեն Աշոտյանի հրամանով, կրթական ոլորտի զարգացման գործում ունեցած մեծ ներդրման համար ՀՊՏՀ ուսանողական խորհուրդը պարգևատրվել է ՀՀ ԿԳՆ ոսկե հուշամեդալով:

Ուսանողական խորհուրդն ակտիվ մասնակցություն է ունեցել Հայաստանի ուսանողական ազգային ասոցիացիայի աշխատանքներին: 2013 թվականի ընթացքում ուսանողական խորհրդի ներկայացուցիչները Ռումինիայում և Խորվաթիայում մասնակցել են Եվրոպայի ուսանողական միության համաժողովներին:

Համալսարանում ակտիվացել են նաև մարզական աշխատանքները և համալսարանի թիմերի մասնակցությունը տարբեր մրցումներին և մարզական խաղերին:

Համալսարանի առանձին մարզաձևերի հավաքական թիմերը լավ են հանդես եկել հանրապետական տարբեր մրցումներում և ուսանողական մարզական խաղերում: Աչքի են ընկել սեղանի թենիսիստները, ֆուտբոլիստները շախմատիստները և վոլեյբոլիստները, ովքեր դարձել են չեմպիոններ և մրցանակակիրներ՝ արժանանալով նաև համալսարանի ռեկտորատի խրախուսանքին և դրամական պարգևներին:

Ակտիվ աշխատանքներ են կատարվել ուսանողների շրջանում սպորտը քարոզելու ուղղությամբ. պատրաստվել են ցուցավահանակներ, որտեղ ներկայացվել են համալսարանի տարվա 10 լավագույն մարզիկ-մարզուհիները, ռեկորդակիրները, լուսաբանվել է մարզական առօրյան:

Մարզական կյանքը բուռն է եղել նաև Դիլիջանի «Տնտեսագետ» մարզաառողջարանում, որտեղ, բացի տուրիստական արշավներից և էքսկուրսիաներից, յուրաքանչյուր հերթափոխում կազմակերպվել և անցկացվել են սպարտակիադաներ, մարզական և մշակութային միջոցառումներ:

7. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու տարում համալսարանի բոլոր մասնաշենքերում կատարվել են հիմնական և ընթացիկ վերանորոգման աշխատանքներ:

Քաղաքապետարանի «Գեղեցիկ Երևան» ՄԱԿ-ի ծրագրի և համաշխարհային բանկի էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի հիմնադրամի հետ կնքված պայմանագրի համաձայն բոլոր մասնաշենքերում փայտյա պատուհանները և պատուհանագոգերը փոխարինվում են մետաղապլաստե պատուհաններով և պատուհանագոգերով և արդիականացվում են կաթսայատները:

Կառավարման ֆակուլտետի մասնաշենքում փոխարինվել են նաև փայտյա դռները, վերանորոգվել են աշխատասաենյակները, որոշ աշխատասենյակներում նորացվել է գույքը, հիմնանորոգվել են մեկ տասնյակից ավելի լսարաններ, տեղադրվել են պրոյեկտորներ և էլեկտրոնային գրատախտակներ: Հիմնանորոգվել են ճաշարանը, ձեռք է բերվել անհրաժեշտ գույք, տեղադրվել է օդափոխության համակարգ: Օդորակիչներ են տեղադրվել համալսարանի բոլոր աշխատասենյակներում: Լուծվել է համալսարանի արտաքին պատերի լուսավորության խնդիրը:

Ֆինանսական ֆակուլտետի մասնաշենքի տպարանի նախկին տարածքը հիմնանորոգվել և կահավորվել է համապատասխան կահույքով, սարքավորումներով և վերածվել է Միջազգային ծրագրերի կենտրոնի:

Տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների ֆակուլտետի մասնաշենքի 10-րդ հարկը հիմնանորոգվել, կահավորվել է գրասենյակային և տնտեսական ժամանակակից գույքով, համակարգիչներով, օդորակիչներով և հատկացվել է«Ամբերդ» հետազոտական կենտրոնին:

Մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման ֆակուլտետի մասնաշենքում վերանորոգվել են ապրանքագիտության և տեխնոլոգիայի ամբիոնի երկու լաբորատորիաները: Նախկին համակարգչային N 5 սրահը վերափոխվել է. մի մասը դարձել է տպարան, մյուսը՝ պահեստային տարածք: Տպարանում տեղադրվել են ժամանակակից տպագրամեքենա, անհրաժեշտ սարքավորումներ, անցկացվել են ջեռուցման համակարգ, ջրագիծ: Նորացվել է էլեկտրամատակարարման համակարգը:

Ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետի մասնաշենքում վերանորոգվել և տեխնիկայով հագեցվել է մասնաշենքի բուֆետը, վերափոխվում է կաթսայատունը, տեղադրվում են ժամանակակից նոր կաթսաներ:

5-րդ մասնաշենքում նախապատրաստական աշխատանքներ են կատարվում տարածքի մի մասը ժամանակակից բիզնես դպրոցի պահանջներին համապատասխանեցնելու ուղղությամբ:

Համալսարանի ֆինանսական միջոցներով Ուսանողի տան համար ձեռք է բերվել անհրաժեշտ գույք և սարքավորումներ, շենքի ընդհանուր մուտքից առանձնացնելու համար համալսարանն իր միջոցներով կառուցել է նախամուտքի սրահ, աստիճանավանդակ և աստիճանահարթակներ: Ուսանողի տանը անցկացվել է հեռախոսագիծ, ինտերնետ կապ, տեղադրվել է հեռուստատեսային ալեհավաք:

Դիլիջանի «Տնտեսագետ» մարզաառողջարանի համալիրում նորոգվել է ջրամատակարարման և ջրահեռացման համակարգը, տարածքից մասնաշենքեր մտնող լուսավորության համակարգը: Վերանորոգվել են բոլոր տնակները, քոթեջները, սանհանգույցները, բաղնիքները:

Եղեգնաձորի մասնաճյուղում վերակառուցել է մի քանի լսարաններ և աշխատասենյակներ՝ հարմարեցնելով ժամանակակից պահանջներին: Ձեռք են բերվել մի շարք էլեկտրական և այլ անհրաժեշտ գործիքներ: Ասֆալտապատվել է մասնաճյուղի մոտ 500 մ երկարությամբ գրունտային ճանապարհը:

Համալսարանի հին դարպասների փոխարեն տեղադրվել են նոր դարպասներ: Նախկին պահակակետի փոխարեն կառուցվել է նոր պահակակետ: Համալսարանի բոլոր մուտքերի մոտ տեղադրվել են տուռնիկետներ, աղբամաններ: Նորացվել են ներքին և արտաքին ցուցանակները, դրոշները, բակի տարածքն ապահովվել է Wi-Fi ինտերնետային կապով, 4-րդ մասնաշենքի տանիքում տեղադրվել են գովազդային վահանակներ, սպասարկող անձնակազմն ապահովվել է միատեսակ արտահագուստով,

Մինչև 2013թ. ավարտը նախատեսվում է լրացուցիչ տեղադրել ներքին և արտաքին ցուցանակներ և կազմակերպել տուռնիկետերի աշխատանքը, որի համար արդեն ձեռք են բերվել պլաստիկ քարտերի վրա տպագրող սարքավորումները:

Հաշվետու տարում որակապես փոխվել են տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի միջոցները՝ կատարվել են համակարգչային ցանցի վերազինման, տեսաձայնագրման համակարգի, ինչպես նաև նոր հեռախոսագծերի և հեռախոսակայանի տեղադրման աշխատանքներ: Տեղադրվել է բազմագործառութային ներքին հեռախոսային կայան, որը կապ է ապահովում ժամանակակից IP տեխնոլոգիաներով, ինչը հնարավորություն է տալիս ոչ միայն բարձրացնել կապի որակը, այլև միջոցներ տնտեսել: Բացի այդ, նախկին 100-ի փոխարեն այժմ գործում են 150 ներքին հեռախոսահամարներ:

Բոլոր մասնաշենքերի միջև անցկացվել է նվազագույնը 1 գբ/վ արագություն ապահովող օպտիկամանրաթելային մալուխ, համալսարանի բոլոր համակարգիչներն ունեն համացանցի հասանելիություն: Կորպորատիվ ցանցում իրականացվել են մի շարք կառուցվածքային փոփոխություններ, մասնավորապես՝ կորպորատիվ ցանցից առանձնացվել է համակարգչային լաբորատոր սրահների համակարգիչների ցանցը:

Հաշվետու տարում համալսարանը համալրվել է 108 նոր աշխատանքային համակարգիչներով, 84 տպիչներով, 3 գերհզոր սերվերներով: Այժմ ուսումնական գործընթացի, գիտական հետազոտությունների և կազմակերպական աշխատանքների համար բուհում օգտագործվում են շուրջ 500 համակարգիչներ:

2012թ. իրականացված համակարգչային ռեսուրսների գույքագրման արդյունքներով, ըստ տեխնիկական վիճակի և աշխատունակության դասակարգման, գնահատվել են առկա կարիքները, կազմվել է անհրաժեշտ գնումների պլան: Այդ ամենի հիման վրա նորացվել են ՀՊՏՀ տեխնիկական հնարավորությունները:

2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ-ՆՈՅԵՄԲԵՐ ԱՄԻՍՆԵՐԻ ԲՅՈՒՋԵԻ ՓԱՍՏԱՑԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ

2014 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԾԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Համալսարանի բյուջեի եկամուտների և ծախսերի ցուցանիշներն արտահայտված են դրամական փաստացի հոսքերով 11 ամսվա կտրվածքով:

1. 2013 թվականի բյուջեի կատարողականը

Համալսարանի փաստացի մուտքերը 2013 թ.11 ամսվա համար կազմել են 3.665,4 մլն դրամ՝տարեկան նախահաշվային 3.944,3 մլն դրամի դիմաց, դեկտեմբեր ամսվա մուտքերը կկազմեն մոտ 95 մլն.դրամ: Արդյունքում 2012 թ.-ի տարեկան փաստացի մուտքերի համեմատ կավելանա շուրջ 170,8 մլն դրամով: Գանձման ենթակա ուսման վարձից 150 մլն դրամը գանձվելու է 2014 թվականին: Եկամուտների առաջացման աղբյուրներն են՝

- տարեսկզբի մնացորդը՝ 855,4 մլն դրամ կամ 23,3 %,
- բյուջեից ֆինանսավորումը՝ 262,5 մլն դրամ կամ 7,2 %,
- գիտության գծով ֆինանսավորումը՝ 7,9 մլն, նախատեսված 11,5 մլն դրամից
- վճարովի ուսուցումից ստացված մուտքերը՝ 2.456,0 մլն դրամ կամ 67 %,
- այլ եկամուտներ՝ 88 մլն դրամ կամ 2,4 % (որի մեջ ներառված են սննդամթերքի իրացում, ծառայությունների մատուցում, տեղեկանքների տրամադրում, գրականության և այլ ակտիվների իրացում):

2013 թվականի 11 ամսվա փաստացի ելքերը կազմել են 2.694,7 մլն դրամ, որը նախահաշվային ծախսերի համեմատությամբ տնտեսել ենք շուրջ 612,2 մլն դրամ: Դեկտեմբեր ամսվա ելքերը կկազմեն մոտ 500 մլն դրամ, որի արդյունքում կտնտեսվի մոտ 112,2 մլն դրամ:

Ընդհանուր ծախսերի մեջ

- աշխատավարձի ֆոնդը՝ (զուտ աշխատավարձը և եկամտային հարկը միասին) 11 ամիսների կտրվածքով կազմել է 2.080,1 մլն դրամ, որը կազմում է ընդհանուր ծախսերի 77,2%-ը:
- գրասենյակային, տնտեսական, սննդի ձեռքբերման ելքերը կազմել են 36 մլն դրամ,
- գործուղման և ներկայացուցչական ծախսերը՝ 14,4 մլն դրամ,
- էլեկտրաեներգիայի, վառելիքի, տրանսպորտի, կապի, ջեռուցման և կոմունալ ծախսերը կազմել են 47,6 մլն դրամ,

- 2013-ին ՀՀ ԽՀՎՀՏ-ին բյուջեի փաստացի վճարները կազմել են 517,1 մլն դրամ, որը ընդհանուր ծախսերի 19.2%-ն է կազմել, որից
- եկամտային հարկ 485,6 մլն դրամ ,

- շահութահարկ 23,9 մլն դրամ,
- ավելացված արժեքի հարկ 3,1 մլն դրամ
- այլ հարկեր և տուրքեր 4,5 մլն դրամ

դեռ 2013թ-ին պետք է վճարվի մոտ 65 մլն դրամ:

- Կազմակերպություններին և անձանց ֆինանսական աջակցության կամ օգնության

գումարը կազմել է 53,8 մլն դրամ, որից 44 մլն-ը ՀԵՀ-ին, մնացածը օգնություն այլ կազմակերպություններին, աշխատակիցներին և տրվել են անվանական կրթաթոշակներ ուսանողներին՝(720 հազար դրամ)

- Համահայկական Հիմնադրամին՝ 1 մլն դրամ

-Ուսխորհրդին՝ 7 մլն դրամ, որից 1,7 մլն-ը Դիլիջանի սպորտ ճամբարի կազմակերպում, :

- ՀՊՏՀ Գյումրու և Եղեգնաձորի մասնաճյուղերի ֆինանսավորում 21.2 մլն դրամ,

- Գիտության գծով ծախսերը կազմել են 77,1 մլն դրամ որի մեջ ներառվել են նաև ՀՀ ԿԳՆ Գիտության Պետ.կոմիտեի կողմից ֆինանսավորումը:

_Դրամաշնորհից «Տեմպուս» ծրագրի շրջանակներում՝ 51,6 մլն դրամ:

- 2013թ-ի ընթացքում ձեռք են բերվել հիմնական միջոցներ և տնտեսական գույք՝ 101 մլն դրամ կամ ծախսերի 3,7 %-ը,

- Կապիտալ շինարարական և վերանորոգման, ինչպես նաև ընթացիկ վերանորոգման ծախսերը կազմել են 124,2 մլն դրամ կամ ծախսերի 4,6%-ը:

Այսպիսով, 2013թ-ին օպտիմալ կազմակերպելով աշխատանքները, 11 ամիսների արդյունքում՝ ծախսերի նկատմամբ եկամուտները գերազանցել են և դրամական մանացորդը առ 30.11.2013թ-ի դրությամբ կազմում են 970,7 մլն դրամ, որը 2013թ-ի նախահաշվի ցուցանիշից ավելի է 333,2 մլն դրամով և հաշվի առնելով 2013թ.-ի դեկտեմբեր ամսվա կանխատեսվող մուտքերը և ելքերը դրամական մնացորդը առ 01.01.2014թ.-ի դրությամբ կկազմի մոտ 565.7 մլն դրամ:

2. 2014 թվականի բյուջեի նախագծի հիմնական ցուցանիշները

Համալսարանի 2014 թվականի բյուջեի մուտքերը նախատեսված են 3.765,3 մլն դրամ, այդ թվում տարեսկզբի մնացորդը՝ 565,7 մլն դրամ կամ 15 %:

Պետբյուջեից ֆինանսավորումը կազմելու է 307 մլն դրամ կամ 8,1 %:

Վճարովի համակարգից ստացվող մուտքերը կազմելու են 2.809,3 մլն դրամ կամ 74,6 %, այլ եկամուտները՝ 78,3 մլն դրամ կամ 2 %:

Պետության և այլ կազմակերպությունների կողմից դրամաշնորհային ծրագրերից՝ 15,3 մլն դրամ:

2014 թ. բյուջեով ծախսերը կազմելու են 3.506,0 մլն դրամ, այդ թվում՝

- ընթացիկ ծախսերը՝ 2.503,8 մլն դրամ կամ 71.4 %,
- կապիտալ ծախսերը՝ 230,0 մլն դրամ կամ 6,6 %:
- Քանի որ 2014թ-ին նախատեսվում է աշխատավարձերի բարձրացում 10%-ի չափով, ավելանալու են հարկային և պարտադիր կուտակային կենսաթոշակային վճարները, արդյունքում աշխատավարձի ծախսը և բյուջեին կատարվող վճարները ևս ավելանալու են համեմատելով 2013թ-ի արդյունքների հետ:

Ընդհանուր ծախսերի ծավալում աշխատավարձի ֆոնդը նախատեսվում է 2.530,0 մլն դրամ կամ 72,2 %:

- 2014թ.-ին պետբյուջեին և պարտադիր կուտակային կենսաթոշակային ֆոնդին կատարվող վճարումները նախատեսվում են 737,6 մլն դրամ կամ ընդհանուր ծախսերի 21 %:
- Կամավոր բժշկական ապահովագրության վճարները՝ 25 մլն դրամ,
- Գիտության գծով ծախսերը՝ 111,7 մլն դրամ կամ ընդհանուր ծախսերի 3,2%:
- Կրթաթոշակ ուսանողներին ՀՊՏՀ միջոցներից նախատեսվում է 20,7 մլն դրամ:

3. 2013 թվականի համախմբված՝ ՀՊՏՀ, Գյումրու և Եղեգնաձոր մասնաճյուղերի բյուջեի կատարողականը

Համալսարանի փաստացի մուտքերը 2013 թ.-ի 11 ամսվա համար կազմել են

3.951,8 մլն դրամ՝ նախահաշվային 4.234,9 մլն դրամի դիմաց առաջացման աղբյուրներն են՝

- տարեսկզբի մնացորդը՝ 929,8 մլն դրամ կամ 23.5 %,
- բյուջեից ֆինանսավորումը՝ 277,5 մլն դրամ կամ 7 %,
- վճարովի ուսուցումից ստացված մուտքերը՝ 2.652,2 մլն դրամ կամ 67 %,
- այլ եկամուտներ՝ 88,9 մլն դրամ կամ 2,2 % (որի մեջ ներառված են սննդամթերքի իրացում, ծառայությունների մատուցում, տեղեկանքների տրամադրում, գրականության և այլ ակտիվների իրացում):

2013 թվականի 11 ամիսների փաստացի ծախսերը կազմել են 2.903,7 մլն դրամ, որը նախահաշվային ծախսերի համեմատությամբ տնտեսել ենք շուրջ 681,3 մլն դրամ:

Ընդհանուր ծախսերի մեջ

- աշխատավարձի ֆոնդը՝ (զուտ աշխատավարձը և եկամտային հարկը միասին) 11 ամիսների կտրվածքով կազմել է 2.260,8 մլն դրամ, որը կազմում է ընդհանուր ծախսերի 78%-ը: 2013թ.-ի դեկտեմբեր ամսվա աշխատավարձի ֆոնդը կկազմի մոտ 350,3 մլն դրամ:
- էլեկտրաեներգիայի, վառելիքի, տրանսպորտի, կապի, ջեռուցման և կոմունալ ծախսերը կազմել են 56,5 մլն դրամ, կամ ընդհանուր ծախսերի 2%-ը,
- 2013-ին ՀՀ բյուջեին 11 ամիսների ընթացքում փաստացի վճարները կազմել են 562,9 մլն դրամ, որը ընդհանուր ծախսերի 19,4%-ն է կազմել, որից
- եկամտային հարկ 530,3 մլն դրամ ,
- շահութահարկ 24,6 մլն դրամ,
- ավելացված արժեքի հարկ 3,2 մլն դրամ
- այլ հարկեր և տուրքեր 4,8 մլն դրամ
- Կազմակերպություններին և անձանց ֆինանսական աջակցության կամ օգնության

գումարը կազմել է 54 մլն դրամ,

- Դրամաշնորհային՝«Տեմպուս» և «Մահաթմա» ծրագրերից՝ 52,4 մլն դրամ

- 2013թ-ի ընթացքում կապիտալ բնույթի ծախսերը կազմել են 221,7 մլն դրամ կամ ընդհանուր ծախսերի 7,6%-ը:

Այսպիսով, հաշվի առնելով 2013թ-ի դեկտեմբեր ամսվա դրամական մուտքերը և ելքերը մանացորդը առ 01.01.2014թ-ի դրությամբ կկազմի մոտ 607,2 մլն դրամ:

4. 2014 թվականի համախմբված բյուջեի նախագծի հիմնական ցուցանիշները

ՀՊՏՀ + (Գյումրու և Եղեգնաձորի մասնաճյուղեր) 2014 թ. համախմբված բյուջեի եկամուտները նախատեսված են 4.097,4 մլն դրամ, որից ընթացիկ տարվա եկամուտները կազմելու են 3.490,2 մլն դրամ կամ 85,2 %, տարեսկզբի մնացորդը՝ 607,2 մլն դրամ կամ 14,8%:

Ընթացիկ տարվա եկամուտների մեջ ուսման վարձը կազմելու է 3.080,7 մլն դրամ կամ 75,2%, ֆինանսավորումը պետբյուջեից՝ պետպատվերով ուսուցման դիմաց՝ 325,4 մլն դրամ կամ 8 %, այլ եկամուտները՝ 79,1 մլն դրամ կամ 1,9 %:

2014 թ. համախմբված բյուջեի ծախսերը նախատեսվում են 3.834,9 մլն դրամ, որից ընթացիկ ծախսերը՝ 2.754,2 մլն դրամ կամ 71,8 %, կապիտալ ծախսերը՝ 236,5 մլն դրամ կամ 6,2%:

Աշխատավարձի ֆոնդը կազմելու է 2.773,7 մլն դրամ կամ 72,3 %:

Պետբյուջեին և պարտադիր կենսաթոշակային ֆոնդին կատարվող վճարները կազմելու են 806,6 մլն դրամ կամ 21 %, իսկ կամավոր բժշկական ապահովագրության վճարները կկազմեն 25,8 մլն դրամ:

Գիտության ծախսերը նախատեսվում են 135,7 մլն դրամ, կամ 3,5%: